

տեսնեն՝ պէտք է որ վար դան եւ զիրենք բռնեն: Երբ Իպն Մնրատ եւ Բարակ դուրս ձիավարեցին, յաջորդ օրը Իպն Մնրատ սուրհանդակ զրկեց Ապու Սայխտի եւ ուրիշ մըն ալ Բուզբարահի եւ իւրաքանչիւր սուրհանդակի ըսաւ. Դուն ասիկա տար այսինչ եւ այսինչ տեղը եւ դուն ալ ասիկա տար այնինչ եւ այնինչ տեղը: Յետոյ մեր վրայ բարձրացե՛ք եւ երբ երկուքս ալ տեսնէ՛ք՝ Ահաասիկ հոս եմ, բռնեցե՛ք, ըսէ՛ք: Ան (Իպն Մնրատ) կ'ուզէր (այս կերպով) շփոթեցնել Բարակը, որպէսզի կարենայ ըսել. Այս ձիավարները մեր ուղղութեամբ կու գան եւ մեզ պիտի բռնեն: Ասիկա անոր համար՝ որ չէր ուզեր Բարակը իր բերդէն անոնց յանձնել»:

«Երկու սուրհանդակները եկան Ապու Սայխտի եւ Բուզբարահի եւ անոնց հետ բարձրացան մինչեւ որ հովիտին վրայ էին, եւ ահա անոնք Բարակի եւ Իպն Սընրատի վրայ էին: Վար նայեցան եւ տեսան Բարակը. յետոյ իրենց մարդոցմով վար իջան, մին՝ մէկ կողմէն, միւսը միւս կողմէն, եւ զանոնք երկուքն ալ բռնեցին իրենց ճնճղկարազէններուն հետ: Բարակ ըստ պիտակ դուռնա մը հազած էր, սպիտակ փաթթոց մը եւ կարճ կոշիկներ. եւ տեսան որ իր ձեռքը ունէր ճնճղկարազէ մը: Երբ տեսաւ որ զինուորները զինքը շրջապատած էին, ան կեցաւ եւ նայեցաւ երկուքին. յանոնք ըսին. Իջի՛ր »:

«Ո՞վ է՛ք դուք, հարցուց ան»:

«Անոնցմէ մին պատասխանեց. Ես Ապու Սայխտն եմ, եւ միւսն ալ պատասխանեց. Ես Բուզբարահն եմ»:

«Այդպէս թող ըլլայ, պատասխանեց Բարակ, եւ ոտքը ծռելով ձիէն իջաւ»:

«Իպն Մնրատ զինքը կը դիտէր. Բարակ զլուրը վերցուց անոր կողմը եւ յանդիմանեց զինքը, ըսելով. Արդարեւ դուն զիս ծախսեցիր Հրեաներուն (Արարներուն տըրուած անարգական անունը – Յ. Ք.) աննշան գումարի մը համար: Եթէ դրամ կ'ուզէիր, եւ եթէ ինձի հարցնէիր՝ ես քեզի աւելին պիտի տայի ասունց տալիքէն»:

«Հեծի՛ր եւ ձիավարէ, ըսաւ Ապու Սայխտ »:

«Եւ ան ըսաւ. Թող այդպէս ըլլայ»:

«Եւ անոնք զինքը բերին ալ-Աֆշինի, եւ երբ անոնք ալ-Աֆշինի բանակատեղիին մօտեցան, ան Բարզանա գնաց եւ իր վրանը հոն կանգնեց եւ կարգադրեց որ մարդիկը երկու կարգի վրայ շարուին: Ալ-Աֆշին նստած էր երկճողեան մեծ վրանի մը մէջ՝ երբ անոնք եկան Բարակի հետ. ան հրամայեց որ թոյլ չտան սեւէ օտարականի երկու շարքերուն մէջ մտնել՝ վախնալով որ անոնք որոնց բարեկամները Բարակ սպաննած էր կամ անոնց որոնց մեծ զժբախտութիւն պատճառած էր, գուցէ զինքը սպաննեն: Բազմաթիւ կիներ եւ երիտասարդներ արդէն եկած էին ալ-Աֆշինին՝ ըսելով որ Բարակ զիրենք բռնած էր, եւ թէ իրենք ազատ ծնած անձեր էին, Արաբ կամ Պարսիկ ազնուականութենէ: Ալ-Աֆշին հրաման տուաւ ասոնց վերաբերմամբ, եւ մեծ շրջափակ մը ցանկապատուեցաւ, ուր զանոնք ստիպեց ապրել, եւ բոլորին նմանապէս հաց տուաւ: Յետոյ ապսպրեց անոնց զրել իրենց ազգականներուն, ուր որ ալ ըլլային անոնք. եւ ով որ գայ եւ ճանչնայ կին մը կամ մանչ մը կամ աղջիկ մը եւ երկու վկաներով հաստատէ թէ կը ճանչնայ զանոնք կամ թէ անոնք իր ընտանեաց կիներ էին կամ ազգականներ, ան (ալ-Աֆշին) զանոնք անոր պիտի յանձնէ: Մարդիկ եկան եւ տարին բազմաթիւ անձեր, բայց շատեր դեռ մնացին սպասելով իրենց ազգականներուն որ գան»:

«Այն օրը երբ ալ-Աֆշին հրամայեց մարդոց շարքեր կազմել՝ կէս մղոն մը կ'երկարէր իր եւ Բարակի միջեւ. որով վերջինս պարտադրուեցաւ ձիէն իջնել եւ քալել շարքերուն մէջէն, իր դուռնան, փաթթոցը եւ կոշիկները հազած, մինչեւ որ կանգնեցաւ ալ-Աֆշինի առջեւ: Ալ-Աֆշին զինքը դիտեց, յետոյ ըսաւ. Զինքը բանակատեղ տարէ՛ք, եւ այսպէս անոնք ուղղուեցան վար իրենց հետ: Բայց երբ կիները եւ երիտասարդները շրջափակին